

դեան երրորդ օրը երանեալ կոյսը դուրս ելաւ քարայ-
րէն, մտաւ գոմը, մանուկը դբաւ մսուրին մէջ և եզն
ու էչը երկրպագեցին Անոր: Այն ատեն կատարուե-
ցաւ ինչ որ ըսած էր Եսայի մարգարէն. ծանեալ եզն
զստացիչ իւր և էչ զմսուր տեառն իւրոյ» (Ես. Ա. 3):

Ձանազան հին մատենագիրներ Քրիստոսի ծննդ-
դեան ժամանակ եզան եւ իշուն ներկայութիւնը կը
նկատեն իբր իրողութիւն, ի մէջ այլոց Յերոնիմոս:
Երկար ժամանակէ սկսեալ արուեստաւորներ համա-
կերպած են ժողովրդային աւանդութեան որ կապակ-
ցութիւն ունի Եսայի մարգարէէն յիշուած համարին
հետ: Գեանազամբաններու քրիստոնէական տապան-
ները նմանօրինակ ներկայացումներու զանազան օրի-
նակներ կ'ընծայեն (Bru. 200, 211):

գ) Քրիստոս գործաւոր Բերդեհեմի մեջ. — Աւանդու-
թիւնը կը պատմէ թէ Յովսէփի մահէն վերջ, Յիսուս
մինչև իր հրապարակային պաշտօնը փոքրիկ ընտանի-
քին միակ նեցուկը ըլլալով՝ տենդագին կ'աշխատէր
իբր գործաւոր: Յիսուս մարդոց համար սրբացուց գոր-
ծաւորական կեանքը և քաջալերեց արհեստաւորները
ներկայացնելու զինքը Բեթղեհէմի իր հիւսնութեան
խանութին մէջ: Այս դէպքերէն մէկուն առիթով՝ Մա-
րիամ նայելով մոգերուն ընծաներուն վրայ (ոսկեթագ,
գաւազան և խնկաման) ու յափշտակուելով պատա-
հած տարօրինակ դէպքերէն, և որոնք ամէնքն ալ ցոյց
կուտային իր որդւոյն անսովոր ճակատագիրը, վեր
առաւ իր գլուխը Անոր նայելու համար: Ճիշդ երե-
կոյին ազօթքի ժամուն Փրկիչը յոգնած՝ ձեռքերն ու
աչքերը վեր բարձրացնելով լռին հազորդակցութեան
մէջ էր իր երկնաւոր Հօրը հետ: